

# ՍԱՂՄՈՍ 52

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Պարծենկոտ ամբարշտության ունայնությունը	Ամբարշտի վերջը և Աստվածավախի խաղաղությունը	Աստծո մոտալուտ դատաստանը բռնակալների դեմ	Աստծո դատաստանը և շնորհքը	Անզգամների ճակատագիրը
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշ- տին, Դավթի երգը, երբ Դովեկն իմաց տվեց Սավուդին, թե Դավիթը Աքիմելեթի տանն է				
52:1-4	52:1-4	52:1-4	52:1-4	52:1-2 52:3-4
52:5-7	52:5-7	52:5-7	52:5-7	52:5 52:6-7
52:8-9	52:8-9	52:8-9	52:8-9	52:8 52:9

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

### ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ուշադրություն դարձրե՛ք, որ այս Սաղմոսը ուղղված է ամբարիշտ մարդկանց (ՀԱՎԱՔԱ-ԿԱՆ ԵՉԱԿԻ թվի կիրառությամբ): Սաղմոսների մեծ մասը ուղղված է Աստծուն:

Բ. Այս Սաղմոսը պարբերությունների մի շարք է, որը հակադրում է ամբարշտի վրա եկած պա-տուհասները և արդարի ապահովության հետ:

Գ. Ուշադրություն դարձրե՛ք երկու խմբերի խոսքերին, որոնք հայտնում են իրենց սրտերը (շարժառիթները, տես՝ Մատթ. 12:34-37):

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 52:1-4

<sup>1</sup>Ինչո՞ւ ես անօրենությամբ պարծենում, ո՛վ հզոր մարդ.

Աստծո բարությունը հարատև է:

<sup>2</sup>Լեզուդ չարություններ է հնարում՝

Սուր ածելու պես նենգաբար գործելով:

<sup>3</sup>Չարությունն ավելի ես սիրում, քան բարությունը,

Սուտը՝ արդարություն խոսելուց ավելի: Սելա:

<sup>4</sup>Սիրում ես ամեն կործանիչ խոսք,

Ով դու, նենգախոս լեզու:

**52:1** Սա հակասական գուգահեռականություն է: Ամբողջ Սաղմոսի ընթացքում ամբարիշտը և արդարը հակադրված են (JPSOA): Փեշխոտան հակադարձում է MT տարբերակին և ամփոփում՝ «անմեղի դեմ ամեն օր»:

LXX-ը ամբողջ համարը ուղղում է միայն «ամբարշտին»: Երկրորդ տողն ունի «անօրենություն ամբողջ օրվա ընթացքում»: AB (Էջ՝ 11) երկրորդ տողը դարձնում է հեզնանք՝ «Ով Էլի նվիրյալը»:

❖ «պարծենում» Այս ԲԱՅԸ (BDB 237, KB 248, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) *Hiphil*-ում հանախ կիրառվում է ինքնագովեստի համար (տես՝ 3 Թագ. 20:11, Սաղմ. 49:6, Առակ. 20:14, 27:1, Երեմ. 49:4): Երեմ. 9:23-24-ում այս տերմինը ունի թե՛ բացասական (սուտ պարծենկոտություն) և թե՛ դրական (պարծենալու համար ճիշտ հիմքեր) կողմեր:

❖ «ո՛վ հզոր մարդ» Սա այն ԲԱՅԱԿԱՆՉԱԿԱՆՆԵՐԻՑ է, որը կիրառվում է նկարագրելու ամբարիշտներին՝

1. ո՛վ հզոր մարդ – BDB 150, նրանք հզոր են իրենց մեղքի մեջ պարծենալով. սա խայթող հեզնանք է
2. ո՛վ ստություն գործող – BDB 793 I ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ BDB 941 I
3. ո՛վ ստախոս լեզու – BDB 546 ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ 941, նկատեք, որ նույն արմատը ինչ #2-ում է, սակայն ավելի մոտ (տես՝ անձնավորված չարի խոսքը, տես՝ Հատուկ Թեմա. Մարդկային Խոսքը):

❖ «բարեգթություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)

❖ «ամբողջ օրը» Սա մատնանշում է ժամանակի մեծ հատված (այսինքն՝ հավիտյան): «Հավիտյանի» գաղափարն այս Սաղմոսում մի քանի անգամ կրկնվում է:

1. Աստծո դատաստանը՝ Սաղմ. 52:5ա
2. արդարի վստահությունը Աստծո բարեգթության վրա է՝ Սաղմ. 52:8բ
3. արդարը գոհանում է Աստծուց՝ Սաղմ. 52:9ա

**52:2** Մենք պետք է հիշենք, որ բառերը հաշվի են առնվում: Դրանք կարող են օրհնել կամ անհիծել (տես՝ Հակոբոս 3:1-12): Բառերի մեջ զորություն կա (տես՝ Սաղմ. 52:4): Մենք հաշիվ ենք տալու Աստծուն մեր խոսքերի համար (տես՝ Մատթ. 12:34-37): Խոսքը հայտնում է սիրտը:

**52:3** Սրանք պոեզիայի ցնցող գուգահեռ տողեր են: Դարգապես մտածեք, թե Աստծո պատկերով և նմանությամբ մարդիկ ինչքան վատ են ընկել: Նրանք դարձել են բացարձակ հակառակը այն բանի, ինչ մտադրված էին լինելու:

«Սեր» բառը (BDB 12) երկու անգամ է կիրառվում և այն էլ ցնցող կերպերով:

1. Նրանք չարն ավելի են սիրում, քան բարին՝ Սաղմ. 52:3

2. նրանք սիրում են կործանիչ խոսքեր՝ Սաղմ. 52:4

<b>NASB</b>	«քան ճիշտը խոսելը»
<b>NKJV</b>	«քան արդարություն խոսելը»
<b>NRSV</b>	«քան ճշմարտությունը խոսելը»
<b>TEV</b>	«քան ճշմարտությունը»
<b>NJB</b>	«շիտակությունից»
<b>JPSOA</b>	«շիտակը խոսելուց»
<b>REB</b>	«քան ճշմարիտ խոսքը»
<b>LXX</b>	«քան արդարացի խոսելը»

Թարգմանություններում այսպիսի զանազանության պատճառն այն է, որ սա «արդարություն» (BDB 841) բառի անսովոր կիրառությունն է: Հաճախ այն կիրառվում է «շիտակ» իմաստով (տես՝ Սաղմ. 23:3), սակայն այստեղ «ճիշտ» իմաստով է (տես՝ Սաղմ. 58:1):

**52:4 «կործանիչը»** Այս ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 118 I) հիմնականում նշանակում է կուլ տալ և կիրառվում է որպես կործանման տեսարան:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 52:5-7**

**<sup>5</sup>Ուստի Աստված հավիտյան կործանելու է քեզ, Քեզ բռնելու է ու պոկելու է քո բնակարանից Ու արմատախիլ է անելու կենդանիների երկրից: Սելա:**

**<sup>6</sup>Արդարները տեսնելու ու վախենալու են Ու նրա վրա ծիծաղելու են՝ ասելով.**

**<sup>7</sup>«Ահա այն մարդը, որ Աստծուն իր գորությունը չդարձրեց, Այլ վատահեց իր մեծ հարստությանն ու իր անօրենությամբ գորացավ»:**

**52:5-7** Այս պարբերությունը հակադրում է այն ինչ Աստված անելու է ամբարշտի հետ և արդարի արձագանքը:

1. Աստծո գործողությունները ամբարշտի հանդեպ հանգեցնում է նրանց մահվան՝
  - ա. Նա հավիտյան կործանելու է (բառացի՝ «քաշելու է ցած») նրանց – BDB 683, KB 736, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
  - բ. Նա բռնելու է նրանց – BDB 367, KB 363, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, սա մի հազվադեպ բառ է, որն օգտագործվում է միայն Սաղմունքում, սակայն նկատելի է, որ նրա մյուս երեք գործածությունները վերաբերում են «կրակը բռնեց ինչ-որ մեկին», տես՝ Առակ. 6:27, 25:22, Եսայի 30:14
  - գ. Պոկելու է քեզ քո բնակարանից – BDB 650, KB 702, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
  - դ. Արմատախիլ է անելու կենդանիների երկրից – BDB 1057, KB 1658, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ *վալ*-ով:
2. Արդարների արձագանքը Աստծ նատաստանի գործողություններին՝
  - ա. տեսնելու են – BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
  - բ. վախենալու են (այսինքն՝ ապաշխարելու են երկյուղով) – BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
  - գ. նրանց դատաստանի վրա ծիծաղելու են – BDB 965, KB 1315, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, Աստված ծիծաղում է Սաղմ. 2:40, 37:13-ում, անձնավորված իմաստությունը ծիծաղում է Առակ. 1:26-ում, այստեղ արդարն է ծիծաղում, երբ Աստծո դատաստանը զալիս է այն մարդկանց վրա, ովքեր մերժել են Նրան և հալածել են իրենց: Նրանք «ծիծաղում են» «հնձում են այն, ինչ ցանել են» իմաստով: Արդարությունը հաղթում է անարդարությանը:

**52:5** Այս «քո բնակարանից պոկելու է քեզ» նկարագրությունը մի դարձվածք է, որը առնչվում է այդ օրերի Իսրայելի քոչվոր վրանային ապրելակերպի հետ (քոչվոր և հետագայում Ելիցը): Այս նույն նկարագրությունը կարելի է տեսնել՝

1. Սավուղը՝ 1 Թագ. 13:2 (տես՝ ձեր տները)

2. Սիրա՝ 2 Թագ. 20:1 (տես՝ ձեր տները)
3. Հերոդովամ I՝ 3 Թագ. 12:16, 2 Մնաց. 10:16 (տես՝ մեր սեփական երկիրը)
4. Պողոսը՝ 2 Կորնթ. 5:1-10 (վրանը որպես մարդու մարմնի փոխաբերություն)

❖ **«հավիտյան»** «Հավիտյան» հասկացությունը նշվում է Սաղմոսի երեք տողերում՝

1. Աստծո դատաստանը «հավիտյան» է՝ Սաղմ. 52:5 (BDB 664, տես՝ Հոր 4:20, 14:20, 20:7, 23:7, Սաղմ. 9:7)
2. Աստծո օրհնությունը «հավիտյանս հավիտենից» է՝ 52:8  
ա. հավիտյան՝ BDB 761 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ)  
բ. հավիտենից՝ BDB 723 I (այս երկուսի բաղադրյալը Սաղմ. 9:5, 10:16, 21:4, 45:6, 17, 48:14, 104:5, 119:44, 145:1,2,21-ում)
3. հավատարիմ հետևորդների գոհությունը «հավիտյան» է, Սաղմ. 52:9՝ BDB 761:

❖ **«կենդանիների երկրից»** Այս ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ (BDB 75, BDB 313) դարձվածք է կյանքի համար (տես՝ Հոր 28:13, Սաղմ. 27:13, 116:9, 142:5, Եսայի 38:11, Երեմ. 11:19): Այն հակադրվում է «մեռելների երկրին», որը կլիներ *Շեռը* կամ Գուրը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները):

❖ **«Սեյա»** Տես՝ Սաղմոս 3:2-ի գրառումը և Սաղմոսացի Ներածություն, VII:

**52:7** Սաղմոս 52:7-ը Սաղմ. 52:1-4-ում նկատի ունեցած անձի մասին նկարագրություն է:

1. նա Աստծուն իր գորությունը չդարձրեց
2. նա իր հարստության առատությանը վստահեց, տես՝ Հոր 31:24-28, Սաղմ. 49:6-9, Առակ. 11:28
3. նա իր անօրենությանը գորացավ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 52:8-9**

<sup>8</sup>Սակայն ես Աստծո Տան մեջ կանաչ ձիթենու պես եմ .  
**Աստծո ողորմության վրա է իմ հույսը հավիտյանս հավիտենից:**  
<sup>9</sup>Քո արածի համար հավիտյան փառաբանելու եմ Քեզ  
**Ու Քո անվանն եմ սպասելու,**  
**Քանի որ բարի է սրբերիդ առջև:**

**52:8-9** Ինչպես որ Սաղմ. 52:5-ը բնութագրում է ամբարշտին (այսինքն՝ արմատախիլ արված), Սաղմ. 52:8 բնութագրում է արդարին (այսինքն՝ տնկված):

1. Նա Աստծո Տան մեջ դալար ձիթենու պես է, տես՝ Սաղմ. 1:3, 92:12-14, 128:3, Երեմ. 11:16, 17:5-8
2. Նա հավիտյանս վստահում է Աստծո բարեգթությանը, տես՝ Սաղմ. 13:5, այս բարեգթությունը հավիտյան է, տես՝ Սաղմ. 52:8. ամբարիշտը վստահում է իր սեփական հարստությանը:
3. Նա հավիտյան փառաբանելու է Աստծուն – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱԲ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով:
4. Նա սպասելու է Նրա անվանը – BDB 875, KB 1082, *Piel* ԱՆԿԱՏԱԲ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով:

**52:9 «Քո անունը»** Այն բնութագրվում է որպես «բարի է»: Տես՝ : Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»:

❖ **«սրբերիդ առջև»** Սա կարող է վերաբերել՝

1. հրեշտակներին
2. տաճարում գտնվող հավատարիմ հետևորդներին (տես՝ Սաղմ. 52:8, «Աստծո Տունը»):

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչն է այս Սաղմոսում անսովոր:
2. Թվարկե՛ք տարբեր ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆՆԵՐ, որոնք կիրառվել են նկարագրելու կամ անձնավորելու ամբարշտին:
3. Համեմատե՛ք, թե ինչ է անելու Աստված ամբարշտի հետ ի դեմս Սաղմ. 52:5-6-ում նկարագրված արդարների:
4. Ի՞նչ են անում ամբարիշտները, որոնք իրենց Աստծուց հեռացնում են:
5. Ովքե՞ր են Սաղմ. 52:9-ի «սրբերը»: